«Wi-Fly» սակագնային փաթեթի պայմանները

1. «Wi-Fly» սակագնային փաթեթը ֆիզիկական անձանց համար նախատեսված GPON տեխնոլոգիայի միջոցով տրամադրվող «Լայնաշերտ ինտերնետ» ծառայության սակագնային փաթեթ է և իր մեջ ներառում է հետևյալ սակագները.

- «Wi-Fly Էկոնոմ»/ «Wi-Fly տարեկան Էկոնոմ» սակագնային փաթեթ,
- «Wi-Fly մարզային»/ «Wi-Fly տարեկան մարզային» սակագնային փաթեթ,
- «Wi-Fly I»/ «Wi-Fly տարեկան I»սակագնային փաթեթ,
- «Wi-Fly II»/ «Wi-Fly տարեկան II» սակագնային փաթեթ,
- «Wi-Fly III»/ «Wi-Fly տարեկան III» սակագնային փաթեթ,
- «Wi-Fly IV»/ «Wi-Fly տարեկան IV» սակագնային փաթեթ:

Աղյուսակ 1. «Wi-Fly» սակագնային փաթեթի գնացուցակ

Գները ներկայացված են ՀՀ դրամով և ներառում են ԱԱՀ:

«Wi-Fly» սակագնային փաթեթ	Արագություն	Wi-Fi Սարք (ակտիվացված Wi-Fi ծառայությամբ) [1]	Հավելյալ Ծառայություն «Տուրբո»[2]	Ամսավճար
«Wi-Fly մարզային»[3]	40 Մբ/վ	Ներառված	Ներառված	5200
«Wi-Fly I»	100 Մբ/վ	Ներառված	Ներառված	6500
«Wi-Fly II»	200 Մբ/վ	Ներառված	Ներառված	7500
«Wi-Fly III»	300 Մբ/վ	Ներառված	Ներառված	8000
«Wi-Fly IV»	500 Մբ/վ	Ներառված	Ներառված	9000

Աղյուսակ 2. «Wi-Fly» սակագնային փաթեթի գնացուցակ Գյումրի և Ալավերդի քաղաքներում:

Գները ներկայացված են ՀՀ դրամով և ներառում են ԱԱՀ:

«Wi-Fly» սակագնային փաթեթ	Արագություն	Wi-Fi Սարք (ակտիվացված Wi-Fi ծառայությամբ) [4]	Հավելյալ Ծառայություն «Տուրբո»[5]	Ամսավճար
«Wi-Fly Էկոնոմ»	100 Մբ/վ	Ներառված[6]	Ներառված	4500
«Wi-Fly I»	200 Մբ/վ	Ներառված	Ներառված	6500
«Wi-Fly II»	300 Մբ/վ	Ներառված	Ներառված	7500
«Wi-Fly III»	400 Մբ/վ	Ներառված	Ներառված	8000
«Wi-Fly IV»	500 Մբ/վ	Ներառված	Ներառված	9000

[1] Օպերատորի և Բաժանորդի միջև պայմանագրի դադարեցման (միակողմանի կամ երկկողմանի) դեպքում Wi-Fi Սարքը ենթակա է վերադարձման Օպերատորին:

2 Սույն հրամանի կիրառության մեջ մտնելու պահից մինչ 31.01.2026թ-ը ներառյալ «Տուրբո» հավելյալ ծառայությունը ներառված է Աղյուսակ 1-ով սահմանված . «Wi-Fly» սակագնային փաթեթներում:

[3] Wi-Fly Մարզային սակագնային փաթեթին հնարավոր չէ միանալ Երևան քաղաքում:

[4] Օպերատորի և Բաժանորդի միջև պայմանագրի դադարեցման (միակողմանի կամ երկկողմանի) դեպքում Wi-Fi Սարքը ենթակա է վերադարձման Օպերատորին:

[5] Սույն հրամանի կիրառության մեջ մտնելու պահից մինչ 31.01.2026թ-ը ներառյալ «Տուրբո» հավելյալ ծառայությունը ներառված է Աղյուսակ 2-ով սահմանված . «Wi-Fly» սակագնային փաթեթներում:

[6] Եթե որևէ հավելյալ ծառայություն ներառված է, ապա տվյալ սակագնային փաթեթի շրջանակներում տվյալ հավելյալ ծառայության համար չի գանձվում սահմանված ամսավճարը: «Տուրբո» ծառայությունը մատուցվում է բաժանորդի ընտրությամբ, այիսնքն անկախ այն բանից «Տուրբո» ծառայությունը ներառված է թե հասանելի տվյալ սակագնային փաթեթի շրջանակում, վերջինս տրամադրվում է բացառապես Բաժանորդի ցանկությամբ: Եթե բաժանորդը չի ցանկանում ակտիվացնել «Տուրբո» ծառայությունը, այն չի ակտիվանում, և համապատասխանաբար «TurboSpeed AX1800» սարքը չի տեղադրվում բաժանորդային հասցեում:

Աղյուսակ 3. «Wi-Fly տարեկան» սակագնային փաթեթի գնացուցակ

Գները ներկայացված են ՀՀ դրամով և ներառում են ԱԱՀ:

«Wi-Fly տարեկան» սակագնային փաթեթ	Արագություն	Wi-Fi Սարք (ակտիվացված Wi-Fi ծառայությամբ) [7]	Հավելյալ Ծառայություն «Տուրբո»[8]	Ամսավճար
«Wi-Fly տարեկան մարզային»[9]	40 Մբ/վ	Ներառված	Ներառված	4700
«Wi-Fly տարեկան I»	100 Մբ/վ	Ներառված	Ներառված	6000
«Wi-Fly տարեկան II»	200 Մբ/վ	Ներառված	Ներառված	7000
«Wi-Fly տարեկան III»	300 Մբ/վ	Ներառված	Ներառված	7500
«Wi-Fly տարեկան IV»	500 Մբ/վ	Ներառված	Ներառված	8500

Աղյուսակ 4. «Wi-Fly տարեկան» սակագնային փաթեթի գնացուցակ Գյումրի և Ալավերդի քաղաքներում:

Գները ներկայացված են ՀՀ դրամով և ներառում են ԱԱՀ:

«Wi-Fly տարեկան» սակագնային փաթեթ	Արագություն	Wi-Fi Սարք (ակտիվացված Wi-Fi ծառայությամբ) [10]	Հավելյալ Ծառայություն «Տուրբո»[11]	Ամսավճար
«Wi-Fly տարեկան Էկոնոմ»	100 Մբ/վ	Ներառված[12]	Ներառված	4000
«Wi-Fly տարեկան I»	200 Մբ/վ	Ներառված	Ներառված	6000
«Wi-Fly տարեկան II»	300 Մբ/վ	Ներառված	Ներառված	7000
«Wi-Fly տարեկան III»	400 Մբ/վ	Ներառված	Ներառված	7500
«Wi-Fly տարեկան IV»	500 Մբ/վ	Ներառված	Ներառված	8500

1.1. Բաժանորդագրվելով «Wi-Fly տարեկան» սակագնային փաթեթներին 1 (մեկ) տարի բաժանորդագրության պայմանով՝ Բաժանորդը սկսում է օգտվել Ծառայություններից «Wi-Fly տարեկան» սակագնային փաթեթների սակագներով (ամսավճարներով) և պարտավորվում է Ծառայության ակտիվացման օրվանից 1 (մեկ) տարի (365 (երեք հարյուր վաթսունհինգ) օր) շարունակ օգտվել «Wi-Fly տարեկան» սակագնային փաթեթներից՝ ստանալով փաթեթով տրամադրվող առավելությունները: Եթե Բաժանորդը Ծառայություններին միացել է ավտոմատ վերակնքման պայմանով, ապա 1 (մեկ) տարի (365 (երեք հարյուր վաթսունհինգ) օր) անց Բաժանորդի պայմանագիրը ավտոմատ վերակնքվում է ևս 1 (մեկ) տարով (365 (երեք հարյուր վաթսունհինգ) օրով), և Բաժանորդը շարունակում է ստանալ տարեկան բաժանորդագրության պայմաններով նախատեսված Ծառայությունների առավելությունները: Սույն կանոնը գործում է յուրաքանչյուր հերթական երկարաձգման համար՝ Բաժանորդային պայմանագիրը 1 (մեկ) տարի (365 (երեք հարյուր վաթսունհինգ) օր) պարտադիր ժամկետով ավտոմատ կերպով պարբերաբար միևնույն սկզբունքով վերակնքվում է նաև հաջորդ տարիներին, եթե Բաժանորդը իր գրավոր դիմումի հիման վրա չի հրաժարվում Բաժանորդային պայմանագրի ավտոմատ վերակնքման ծառայությունից: Բաժանորդը կարող է հրաժարվել ավտոմատ վերակնքման պայմանից՝ բաժանորդագրության պայմանագիր կնքելիս, ինչպես նաև ցանկացած ժամանակ մինչև պարտադիր բաժանորդագրության ժամկետի ավարտը. այդ դեպքում պարտադիր բաժանորդագրության ավարտից հետո Բաժանորդին Ծառայությունները կմատուցվեն «Wi-Fly» սակագնային փաթեթների սակագներին (ամսավճարներին) և պայմաններին համապատասխան:[13]

Աղյուսակ 3-ում և Աղուսակ 4-ում սահմանված «Wi-Fly տարեկան» սակագնային փաթեթներին միանալու դեպքում Բաժանորդը ստանում է հետևյալ առավելությունը՝

---

[7] Օպերատորի և Բաժանորդի միջև պայմանագրի դադարեցման (միակողմանի կամ երկկողմանի) դեպքում Wi-Fi Սարքը ենթակա է վերադարձման Օպերատորին:

[8] Սույն հրամանի կիրառության մեջ մտնելու պահից մինչ 31.01.2026թ-ը ներառյալ «Տուրբո» հավելյալ ծառայությունը ներառված է Աղյուսակ 3-ով սահմանված . «Wi-Fly տարեկան» սակագնային փաթեթներում:

[9] Wi-Fly Մարզային սակագնային փաթեթին հնարավոր չէ միանալ Երևան քաղաքում:

[10] Օպերատորի և Բաժանորդի միջև պայմանագրի դադարեցման (միակողմանի կամ երկկողմանի) դեպքում Wi-Fi Սարքը ենթակա է վերադարձման Օպերատորին:

[11] Սույն հրամանի կիրառության մեջ մտնելու պահից մինչ 31.01.2026թ-ը ներառյալ «Տուրբո» հավելյալ ծառայությունը ներառված է Աղյուսակ 3-ով սահմանված . «Wi-Fly տարեկան» սակագնային փաթեթներում:

[12] Եթե որևէ հավելյալ ծառայություն ներառված է, ապա տվյալ սակագնային փաթեթի շրջանակներում տվյալ հավելյալ ծառայության համար չի գանձվում սահմանված ամսավճարը: «Տուրբո» ծառայությունը մատուցվում է բաժանորդի ընտրությամբ, այինքն անկախ այն բանից «Տուրբո» ծառայությունը ներառված է թե հասանելի տվյալ սակագնային փաթեթի շրջանակում, վերջինս տրամադրվում է բացառապես Բաժանորդի ցանկությամբ: Եթե բաժանորդը չի ցանկանում ակտիվացնել «Տուրբո» ծառայությունը, այն չի ակտիվանում, և համապատասխանաբար «TurboSpeed AX1800» սարքը չի տեղադրվում բաժանորդային հասցեում:

[13] «Ավտովերակնքում» ծառայության մանրամասն պայմաններին կարող եք ծանոթանալ անցնելով հետևյալ հղմամբ՝ www.ovio.am:

1.2. Աղյուսակ 3-ում և Աղուսակ 4-ում սահմանված «Wi-Fly տարեկան» սակագնային փաթեթներին միանալու դեպքում Բաժանորդը ստանում է հետևյալ առավելությունը՝

i. Սույն պայմանների Աղյուսակ 3-ում և Աղուսակ 4-ում սահմանված «Wi-Fly տարեկան» սակագնային փաթեթի շրջանակում ի լրումն Աղյուսակ 3-ի և Աղուսակ 4-ի՝ հիմնական Ծառայությունների ակտիվացման պահից սկսած Բաժանորդի հաշիվը համալրվում է Աղյուսակ 5-ում նշված գումարի չափով՝ ըստ սակագնային փաթեթների[14], եթե վաճառքը իրականացվում է Ակտիվ վաճառքի, Գործակալների և Հեռախոսազանգերի /Տելեսեյլինգի/ միջոցով:

Աղյուսակ 5. «Wi-Fly տարեկան» սակագնային փաթեթ					
	Wi-Fly տարեկան մարզային	Wi-Fly տարեկան I	Wi-Fly տարեկան II	Wi-Fly տարեկան III	Wi-Fly տարեկան IV
Բաժանորդային հաշվին համալրվող գումարի չափ	9400	12000	14000	15000	17000

ii. Սույն պայմանների Աղյուսակ 3-ում և Աղուսակ 4-ում սահմանված «Wi-Fly տարեկան» սակագնային փաթեթի շրջանակում ի լրումն Աղյուսակ 3-ի և Աղուսակ 4-ի հիմնական Ծառայությունների ակտիվացման պահից սկսած Բաժանորդի հաշիվը համալրվում է Աղյուսակ 6-ում նշված գումարի չափով՝ ըստ սակագնային փաթեթների[15], եթե վաճառքը իրականացվում է Վաճառքի և սպասարկման սրահներում և Օնլայն բաժանորդագրության միջոցով:

Աղյուսակ 6. «Wi-Fly տարեկան» սակագնային փաթեթ					
	Wi-Fly տարեկան մարզային	Wi-Fly տարեկան I	Wi-Fly տարեկան II	Wi-Fly տարեկան III	Wi-Fly տարեկան IV
Բաժանորդային հաշվին համալրվող գումարի չափ	4700	6000	7000	7500	8500

iii. Սույն պայմանների Աղյուսակ 3-ում և Աղուսակ 4-ում սահմանված «Wi-Fly տարեկան» սակագնային փաթեթի շրջանակում ի լրումն Աղյուսակ 3-ի և Աղուսակ 4-ի Բաժանորդը ստանում Ներբնակարանային տեխնիկական սպասարկման ծառայության երեք այց՝ առանց լրացուցիչ վճարի գանձման:

1.3. Սույն պայմանների կետ 1.2.-ի i, ii, iii ենթակետերով սահմանված պայմանները չեն կիրառվում Աղյուսակ 2-ում «Wi-Fly տարեկան Էկոնոմ» սակագնային փաթեթի համար:

1.4. Եթե Բաժանորդը սույն պայմաններով սահմանված կարգով միանում է «Wi-Fly տարեկան» սակագնային փաթեթին և Ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 տարվա (365 օրացուցային օրվա) ընթացքում պայմաններով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցնում է Ծառայությունների մատուցումը կամ Ծառայությունների մատուցումը կասեցվում է վճարումների ուշացման պատճառով, ապա տվյալ սակագնային փաթեթի շրջանակում սույն պայմանների 1.2.-ի i, ii, iii ենթակետերով սահմանված պայմանների տրամադրման ժամկետը չի երկարաձգվում Ծառայությունների մատուցման կասեցված ժամանակահատվածի տևողությամբ:

1.5. Եթե Բաժանորդը բաժանորդագրվել է սույն պայմանների կետ 1.2.-ի i, ii. ենթակետերով սահմանված պայմաններին ապա հիմնական Ծառայությունների ակտիվացման պահից սկսած 4 (չորս) ամիս շարունակ չի կարող կատարել սակագնի/սակագնային փաթեթի փոփոխություն, եթե նոր սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարը առնվազն նախկին սակագնային փաթեթի ամսավճարի չափ չէ:

1.6. Բաժանորդագրվելով «Wi-Fly տարեկան» սակագնային փաթեթներին 1 (մեկ) տարի բաժանորդագրության պայմանով՝ ծառայությունների մատուցման ժամանակավոր կասեցման կամ վճարումների ուշացման պատճառով Ծառայությունների մատուցման կասեցման դեպքում տվյալ ծառայություններին/սակագնային փաթեթին բաժանորդագրության պարտադիր ժամկետը և «Wi-Fly տարեկան» սակագնային փաթեթի պայմանները՝ ներառյալ փաթեթի մեջ ներառումների ու սակագնային փաթեթի ամսավճարի ժամկետը երկարաձգվում են կասեցված ժամանակահատվածի տևողությամբ:

2. Սակագնային փաթեթների փոփոխությունների պայմանները՝ գործող սակագնային փաթեթներից

2.1. Եթե 1 (մեկ) տարի բաժանորդագրության պայմանով գործող բաժանորդը անցում է կատարում սույն պայմանների Աղյուսակ 3-ում և Աղյուսակ 4-ում սահմանված «Wi-Fly տարեկան» կամ «All in տարեկան» սակագնային փաթեթներից որևէ մեկին 1 (մեկ) տարի բաժանորդագրության պայմանով , ապա գործող պայմանագիրը վերակնքվում է ևս 1 (մեկ) տարի բաժանորդագրության պայմանով, Բաժանորդը դադարում է ստանալ նախկին սակագնային փաթեթի պայմանները և սկսում է օգտվել նոր սակագնային փաթեթի պայմաններից բացառությամբ սույն պայմանների 1.2.-ի i, ii. ենթակետերով սահմանված պայմաններից:

---

[14]Սույն կետով սահմանված պայմանը գործում է բացառապես նոր բաժանորդների համար: Սույն կետի պայմաններով Բաժանորդը կարող է ստանալ իր բաժանորդային հաշվին համալրված գումարը միայն բանկային փոխանցման միջոցով իր անձնական հաշվեհամարին՝ ներկայացնելով գրավոր դիմում Օպերատորի Վաճառքի և սպասարկման սրահներից մեկում՝ չունենալով Օպերատորի և/կամ վերջինիս հետ համատեղ մատուցվող ծառայությունների գծով որևէ դրամային պարտավորություն:

[15]Սույն կետով սահմանված պայմանը գործում է բացառապես նոր բաժանորդների համար: Սույն կետի պայմաններով Բաժանորդը կարող է ստանալ իր բաժանորդային հաշվին համալրված գումարը միայն բանկային փոխանցման միջոցով իր անձնական հաշվեհամարին՝ ներկայացնելով գրավոր դիմում Օպերատորի Վաճառքի և սպասարկման սրահներից մեկում՝ չունենալով Օպերատորի և/կամ վերջինիս հետ համատեղ մատուցվող ծառայությունների գծով որևէ դրամային պարտավորություն:

2.2. Եթե 1 (մեկ) տարի բաժանորդագրության պայմանով գործող բաժանորդը անցում է կատարում սույն պայմանների Աղյուսակ 1-ում և Աղյուսակ 2-ում սահմանված «Wi-Fly» սակագնային փաթեթի կամ «All in» որևէ սակագնի ապա տվյալ դեպքում Բաժանորդը դադարում է ստանալ նախկին սակագնային/ծառայությունների փաթեթով սահմանված պայմանները և սկսում է ստանալ նոր սակագնային/ծառայությունների փաթեթով սահմանված պայմանները բացառությամբ սույն պայմանների 1.2.-ի i, ii., iii. ենթակետերով սահմանված պայմանների, սակայն Բաժանորդը շարունակում է օգտվել նոր սակագնային/ծառայությունների փաթեթից պարտադիր տարեկան բաժանորդագրության պայմանով մինչև դրա համար ի սկզբանե սահմանված ժամանակահատվածի ավարտը:

2.3. Եթե գործող բաժանորդը առանց 1 (մեկ) տարի բաժանորդագրության պայմանի անցում է կատարում սույն պայմանների Աղյուսակ 1-ում և Աղյուսակ 2-ում սահմանված «Wi-Fly» սակագնային փաթեթի կամ «All in» որևէ սակագնի ապա տվյալ դեպքում Բաժանորդը դադարում է ստանալ նախկին սակագնային/ծառայությունների փաթեթով սահմանված պայմանները և սկսում է ստանալ նոր սակագնային/ծառայությունների փաթեթով սահմանված պայմանները բացառությամբ սույն պայմանների 1.2.-ի i., ii., iii. ենթակետերով սահմանված պայմաններից առանց 1 (մեկ) տարի բաժանորդագրության պայմանի:

2.4. Եթե գործող բաժանորդը առանց 1 (մեկ) տարի բաժանորդագրության պայմանի անցում է կատարում սույն պայմանների Աղյուսակ 3-ում և Աղյուսակ 4-ում սահմանված «Wi-Fly տարեկան» կամ «All in տարեկան» որևէ սակագնի ապա տվյալ դեպքում Բաժանորդը դադարում է ստանալ նախկին սակագնային/ծառայությունների փաթեթով սահմանված պայմանները և սկսում է ստանալ նոր սակագնային/ծառայությունների փաթեթով սահմանված պայմանները 1 (մեկ) տարի բաժանորդագրության պայմանով բացառությամբ սույն պայմանների 1.2.-ի i, ii, ենթակետերով սահմանված պայմաններից:

3. Սակագնային փաթեթների փոփոխությունների պայմանները՝ սույն պայմաններով սահմանված սակագնային փաթեթների միջև

3.1. Եթե Բաժանորդը անցում է կատարում «Wi-Fly»/«Wi-Fly տարեկան» ծառայությունների փաթեթի այն սակագնային փաթեթից, որտեղ ներառված է «Տուրբո» ծառայությունը մեկ այլ սակագնային փաթեթի, որտեղ «Տուրբո» ծառայությունը ներառված չէ, ապա «Տուրբո» ծառայության համար սահմանված ամսավճարը սկսում է գործել նոր սակագնային փաթեթի շրջանակում՝ անցումը կատարելու պահից սկսած ավտոմատ կերպով: Այս դեպքում բաժանորդն իրավունք ունի հրաժարվել «Տուրբո» ծառայությունից: Եթե բաժանորդը հրաժարվում է «Տուրբո» ծառայությունից, ապա TurboSpeed AX1800 սարքը ապամոնտաժվում է Բաժանորդի բնակարանից՝ ըստ Օպերատորի կողմից սահմանված ընթացակարգի:

3.2. Եթե Բաժանորդը անցում է կատարում «Wi-Fly»/«Wi-Fly տարեկան» սակագնային փաթեթի որևէ սակագնային փաթեթից, որտեղ ներառված չէ «Տուրբո» ծառայությունը մեկ այլ սակագնային փաթեթի, որտեղ «Տուրբո» ծառայությունը ներառված է, ապա «Տուրբո» ծառայության համար սահմանված ամսավճարը դադարում է գործել նոր սակագնային փաթեթի շրջանակում՝ անցումը կատարելու պահից սկսած ավտոմատ կերպով:

Բաժանորդն իրավունք ունի ցանկացած պահի հրաժարվել «Տուրբո» ծառայությունից: Այդ դեպքում Օպերատորը ապամոնտաժում է TurboSpeed AX1800 սարքը Բաժանորդային հասցեից և ծառայության համար սահմանված ամսավճարը դադարում է գործել Բաժանորդի սակագնային փաթեթի շրջանակում:

Օպերատորի և Բաժանորդի միջև կնքված Բաժանորդային պայմանագրի դադարեցման (միակողմանի կամ երկկողմանի) դեպքում TurboSpeed AX1800 Սարքը ենթակա է վերադարձման Օպերատորին:

3.3. «Wi-Fly տարեկան» սակագնային փաթեթների բաժանորդագրության պարտադիր ժամկետը համարվում է ավարտված, երբ Բաժանորդն օգտվում է բաժանորդագրված ծառայությունների փաթեթից/սակագնային փաթեթից ներառված Ծառայությունների ակտիվացման օրվանից սկսած՝ առնվազն 1 տարվա (365 (երեք հարյուր վաթսունհինգ) օրվա) ընթացքում: Մինչև սահմանված ժամկետի ավարտը «Wi-Fly տարեկան» սակագնային փաթեթների բաժանորդագրության դադարեցման դեպքում՝ Բաժանորդի գործողությամբ կամ անգործությամբ պայմանավորված, վերջինս Օպերատորին ամբողջությամբ վճարում է ընթացիկ պարտքը և հրաժարագին 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամի չափով: